ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Եվրոմեդ ՍՊԸ-ն ՌՀԱԲԿ ԷԱԱՊՁԲ 26/25 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
20	Էսկուլապ	Էսկուլապ	Ազդրային բաղադրիչ (Femoral Stem)• Ցեմենտազուրկ, սեպաձև (tapered wedge) առաջնային կայունությամբ ազդրային ոտիկ• Նյութը՝ Ti-6Al-4V տիտանի համաձուլվածք : Ֆիքսացիայի տեսակը՝ press-fit։• Մակերեսը՝ ծակոտկեն :Միացման համակարգը՝ Eurocone 12/14• Առկա է ստանդարտ և լատերալիզացված տարբերակներով• Ոտիկի երկարությունը՝ >125 մմ և ≤185 մմ։• Օֆսեթը՝ >30 մմ և ≤55 մմ• Վզիկ-դիաֆիզարային անկյունը՝ >122° և ≤132°։ Գլխիկ (Femoral Head) •Կերամիկական գլխիկ։ • Գլխիկի տրամագիծը՝ ≥28 մմ և ≤32 մմ։ • Վզիկի երկարությունը (offset)՝ ≥−4 մմ և ≤+7 մմ։ • Գլխիկի կոնուսը լիովին համատեղելի է ազդրային ոտիկի Eurocone 12/14 միացման հետ։Ացետաբուլյար ներդիր (Acetabular Liner)•Նյութը՝ տոկոֆերոլով (Vitamin E) կայունացված, գերբարձր մոլեկուլային քաշով խաչաձև կապակցված պոլիէթիլեն (Vitamin E stabilized HXLPE)։• Առկա է սիմետրիկ, ասիմետրիկ և հակալյուքսացիոն (anti-dislocation / hooded) տարբերակներով։• Ներդիրի չափային շարքը նախատեսված է ≥46 մմ և ≤68 մմ արտաքին տրամագծով բաժակների

			համար։•Ներդիրի ֆիքսացիան բաժակում իրականացվում է կոնուսային մեխանիզմով։•Համատեղելի է ≥28 մմ և ≤32 մմ տրամագծով կերամիկական գլխիկների հետ։ Ացետաբուլյար բաժակ (Acetabular Cup)•Նյութը՝ Ti-6Al-4V տիտանի համաձուլվածք կամ համարժեք։•Ֆիքսացիայի տեսակը՝ press-fit։• Ձևը՝ կիսագնդաձև, հարթեցված գմբեթով (flattened dome)։• Բաժակի գմբեթում առկա է կենտրոնական պտուտակային տեխնոլոգիական անցք։• Արտաքին մակերեսը՝ մաքուր ծակոտկեն տիտանային կառուցվածքով՝ երկրորդային օստեոինտեգրացիայի ապահովման նպատակով։• Ռելիեֆը կազմված է շրջագծային դասավորված մակրոատամիկներից (peripheral macro-teeth), որոնց բարձրությունը աստիճանաբար նվազում է դեպի բաժակի բևեռը։• Արտաքին տրամագիծը՝ >46 մմ և ≤68 մմ։• Ներդիրի ֆիքսացիան իրականացվում է ներքին կոնուսային (internal taper-lock) մեխանիզմով։• Նախատեսված է անհրաժեշտության դեպքում լրացուցիչ պտուտակային ֆիքսացիայի համար։ Բոլոր կոմպոնենտները պետք է լինեն միևնույն արտադրողի կողմից արտադրված, որպեսզի ապահովվի մեկ ամբողջական հավաքածու կազմող բաղադրիչների ճշգրիտ համատեղելիությունը միմյանց հետ։ Կոմպոնենտների տեղադրման համար մրցույթը հաղթող մատակարարը մատակարարման ամբողջ ժամանակահատվածի համար անհատույց պետք է ապահովի էնդոպրոթեզավորման համար անհրաժեշտ ուժային գործիքներով, մասնավորապես. օրթոպեդիկ սողցով, կաննուլացված օրթոպեդիկ շաղափով։ Պարտադիր պայման է CE MARK որակի վկայականների առկայություն, արտադրողի կողմից տրվող համապատասխանության հավաստագրի (ավտորիզացիոն նամակի) և ծագման սերտիֆիկատի առկայությունը։ Յուրաքանչյուր վիրահատության ժամանակ մատակարարը պարտավոր է ապահովել պահանջվող իմպլանտի բոլոր չափերի հասանելիությունը։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Եվրոմեդ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՌՀԱԲԿ ԷԱԱՊՁԲ 26/25 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	наименование производителя	технические характеристики
20			